

ՀՆՁԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ.

Նոր վերջին սեպտեմբեր ամսին սուլթանն իր առջև դրված բարենորոգումների ծրագիր կոչված յայտնի ծաղրածուական թղթի կտորն էր ստորագրում և ամբողջ աշխարհին ցոյց տալիս այդ՝ իբրև սուլթանական «արդարադատութեան զեջում», եւրոպական մամուլը ծափահարում էր նրան: Եւրոպական բոլոր թերթերն այդ ժամանակ մի սրտաշարժ խմբերգ էին կազմել, ներբողներ կարդալով եւրոպական դիպլոմատիայի վարպետութեան, որ այդպիսի մի ծանր խնդիր, ինչպէս հայկականն է, «լուծեց»՝ առանց տեղի տալու եւրոպական պատերազմի: Հետաքրքրաշարժ էր և այն, թէ ինչպէս այդ թերթերը — պաշտօնական և ոչ-պաշտօնական — իրանց տէրութիւնների, կամ հէնց նոյն իսկ իրանց, ծախսոն արդէն սկսել էին զարդարել գովիններով, որը հայկական աղէտները երևան հանելու համար, որը հայերի իրաւունքները պաշտպանելու համար, որը այս, որը այն «բարութեան» համար, որ «տրել» էր հայերին և այդպիսով «նպաստել» նրանց վիճակի «թելթեացման»: Ամենքն այլ ևս գոհ էին: Մնում էր միայն տօնի վերջին տեսարանը, որպէս զի եւրոպական պետութիւնները համբուրվելով սուլթանի հետ, ներողութիւն խնդրէին նրանից այն «վշտերի» համար, որ «աւանգ» պատժաւեցին նրան, երբ...

Եւ, երբ սկսան կատարվել այդ վերջին գործողութեան տեսարանները — ջարդեր, ջարդեր, անընդհատ ջարդեր:

Եւ ժամանակ մամուլի ոճը կրկին փոխվեց. կրկին յարձակումներ սուլթանի վրայ, կրկին սրտաշարժ բացականչութիւններ ու ցաւակցութիւններ հայերի նկատմամբ:

Եւ երաժշտութիւնը վերսկսվում էր իր majeur և mineur եղանակներով:

Չարդերը, սակայն, շարունակվում էին և եւրոպական տէրութիւններն էլ շարունակում էին զիտել արիւնահեղ տեսարանները և միւս կողմից իրանց ներկայացնում էին «անկարող» ղեկավարի այդ արիւնայի ընթացքի առաջն առնելու: Արանք հրաժարվում են մինչ այդ ժամանակ իրանց բռնած սպառնական զիջքից ղեկի սուլթանը, նրանք հրաժարվում են իրանց միջազգային պար-

տականութիւններից ու խոստումներից ղեկի հայկական պար. նրանք, ի վերջոյ, վճռում են «ժամանակ տալ սուլթանին, որ սա բարենորոգումները մոցնէ Հայաստանում»: Հրաժարվում են և այլ ևս այնուհետև «լուծված» համարում հայկական խնդիրը... Եւ զրանից յետ, ինչպէս ընթացող երաժշտական ձայները, որ գնալով կամաց-կամաց մեղմանում և ի վերջոյ բոլորովին կարվում են, եւրոպական մամուլն այսօր այլ ևս զրեթէ լուռ է հայկական խնդրի վերաբերութեամբ և «անցել է աւելի բարձր կարգ շահերի ու ղեկավարի քննութեան»:

Իսկ հայերս... կոտորածների, սովի ու ամեն տեսակ տանջանքների տակ խեղդվելով, մենք այսօր եւրոպական տէրութիւնների շնորհով յանձնված ենք սուլթանի «հայրական գորովագութ խնամատարութեան»:

Վա է ներկայ վիճակը, որ ստեղծվեցաւ վերջին կէս տարւայ միջոցին:

Եւ հայոց արտունջներն ու զանգատները լքեցրել են ամբողջ աշխարհ:

Արդարեւ, վիճակը խիստ բարդ է, չիփթ, անստոյգ, և հէնց իր այդ յատկութեան շնորհով ամեն տեսակէտից և ամեն-մէկի կողմից այլ և այլ, իրար հակառակ, իրար ջրող, իրար հակասող լուսաբանութիւններ ու մեկնաբանութիւններ են տրվում, որոնք, ի վերջոյ, աւելի են խճճում վիճակի մասին ելք փնտռելու միջոցները: Ստացած սարսափելի ուժգին հարուած, բնկած հոգեկան տարուբերող մի տաքնասլում, դառնացած ու վշտոված զգացումներով՝ հայ հասարակութիւնը կորցրել է իր պաղարիւնութիւնը, կորցրել սառն ու անվրդով կերպով դատողութիւն անելու ընդունակութիւնը: Եւ դա, սակայն, ներկայումս մեր ամենավատ թշնամին է: Երողութիւնների ու յաղթութիւնների բոպէին չէ, որ մէկ ազգ ցոյց է տալիս իր կարողութիւնը, քաղաքացիական արիութիւնը, իր հայրենասիրութիւնը, վերջապէս, իր հոգեկան ընդունակութիւնները: Ոչ, բոլորովին մէկ առանձին արժանիք չէ միայն աւջողութեան միջոցին քաջ լինել, կամ ոգևորվել, կամ պռուպ: Վա երկչոտների դործն է: Մի մարդ, մի հայրենասէր, մի քաղաքացի ձախորդութիւնների ու դժբաղդութիւնների միջոցին է, որ պէտք

է ցոյց տայ իր դրական ու բարձր յատկութիւնները, եթէ ունի: Այնպէս և ազգը: Անք — այո՛, ողբանք — այո՛, տրտնջանք, գանգատներ — այո՛, մեր վիճակի վրայ, բայց և ըմբռնենք, որ այդ ընթացքով մենք գտած չենք լինիլ որ և է դարման նոյն այդ ընթացքին վերջ տալու, այսինքն մեր վիճակի համար: Իրականութիւնը, ինչպէս որ է՝ իր ամբողջ ահաբեկութեամբ, կանգնած է մեր դէմ՝ անողոք, սպառնական, կորստաբեր և նա նենգաբար հեղնում է մեր ողբն էլ, մեր գանգատներն էլ: Ո՞ր մէկ հայր ներկայ պարագայում պատասխանատու չի լինիլ պատմութեան առջև, եթէ հետեւ է իր այս կամ այն ներքին անխոստովանելի դիտաւորութեան յագեցում տալու, յարձակումներ անելով սրա կամ նրա դէմ, փոխարէն մտածելու գարմանի և միմիայն դարմանի մասին: Ո՞ր մէկ հայր ներկայ պարագայում յանցաւոր չի նկատվիլ պատմութեան կողմից, եթէ աւելի գրգռէ ներքին հակառակութիւններն ու թշնամութիւնները, փոխարէն որոնելու մի եւթ ներկայ վիճակից, փոխարէն գործելու իրերի ու հանգամանքների դրութեամբ թելադրված միջոցներով, փոխարէն անվհատ, յարասե ու ջրջահայեաց աշխատութեան:

Մեր առաջն են յայտնի իրականութիւն, յայտնի հանգամանքներ. ջանանք մտածել դրանց վրայ մի նպատակի համար, որ բարձր է ամեն նպատակից — հայութեան փրկութեան համար: Չը գիտենք, թէ վաղն ինչ նորանոր հանգամանքներու բաղաբաղան բարդութիւններ կարող են առաջանալ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կը շոշափեն հայկական խնդիրը: Չը գիտենք, թէ ինչ նախագծեր են պատրաստվում զանազան տէրութիւնների գաղտնի դահլիճներում հայկական խնդրի նկատմամբ: Այսօր մենք ահագին հարուածի տակ ենք գտնվում, ջանանք աւելի ահագինը չը ստանալ վտղը: Մեր վիճակն այնպէս է, որ մենք ամեն բան պէտք է սպասենք թէ լաւ և թէ վատ, մանաւանդ վատ, ամեն բան պէտք է նախատեսենք, որքան դա հնարաւոր է, որպէս զի վաղը մեր աւելի դառն վայրը չը տանք: Չը լինի թէ լինենք անպատրաստ ու ձեռնածալ այնպիսի պարագաներում, երբ թերևս այդ անպատրաստութիւնն ու ձեռնածալ մնալը լինի այլ ևս վերջին սոսկալի հարուածը: Հայ ազգը, հակառակ այնքան աղէտների, դեռ ունի իր մէջ ազգային զօրութիւն, դեռ ունի իր մէջ բարոյական ոյժ — ջանանք գործածել մեր կողմից ամեն հնարաւորն ու կարելին, որը տայ մեզ յոյս մեր աշխատութիւնների աղջութեան մասին և դրանով նոր եռանդ, նոր ոգևորութիւն, նոր թարմութիւն ներշնչէ մեր մէջ: Մէկ ամբողջ ժողովուրդ այսօր, Լեված Աւրօպայի կողմից, ինքն

իրան է մնացած՝ իր վիճակի մասին մտածելու ու աշխատելու համար: Այս պէտք է այդ անի. նա պէտք է տէր լինի իր զգացումների ու մտքի. նա պէտք է ջանայ ունենալ պաղարկունութիւն և աշխուրջ ինքնահսկողութիւն ու աշխատութիւն:

Անցեալը դարմանելու և յանուն հայութեան փրկութեան՝ մտածենք ու գործենք ապագայի համար, միշտ ապագայի համար:

ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՅՏՈՒԹԵԱՆ ՊԵՅՄԱՆԱԳԻՐԸ.

1) Օգտագործողները ապայման կերպով կը մերժեն յանձնել Օսմ. կառավարութեան իրենց Հիշակեան պարագրուները:

Ծանօթ. — Հակառակ պարագային Օգտագործողները կը սպառնան շարունակել պատերազմը: Օգտագործողներն այդ նպատակով ցոյցեր արին արդէն:

2) Օգտագործողները Հիշակեան վեց պարագրուները պիտի ձգեն օսմանեան հողը: Բ. Դուռը եր շխաւորութիւն կը տայ վեց Պետութիւններու և Պոլսոյ Դեսպաններուն, որ այդ Հիշակեաններու մեկունը մինչև Եւրոպա պիտի կատարուի ապահով ու անվնաս կերպով և հարկ եղած պատուով, Օսմ. Տէրութեան ծախսով:

3) Բանակցող Հիւպատոսներու միջոցաւ Դեսպանները երաշխաւորութիւն կը տան վեց Հիշակեան պարագրուներուն յօդ. 2-ի ճշգրիտ գործադրութեանը, նոյն եղանակաւ, որպէս կը կատարուին Եւրօպական հրապարակներու և հիւպատոսներու նկատմամբ:

4) Կատարեալ և ամբողջական ընդհանուր ներում (amnistie) ոչ միայն Օգտագործողներուն, այլ և այնտեղ ապաստանած գիւղացիներուն, ճամբորդներուն և հայ հրօթակային խումբերուն:

5) Պիտի հաստատուի մի քրիստոնեայ Կառավարիչ, որ պիտի ընտրուի Եւրօպական Պետութիւններու հաւանութեամբ:

6) Օգտագործողներու ոստիկանութիւնը, հարկահանները, ոստիկան-զինուորները (gendarmes) և կառավարական պաշտօնեաները պիտի ընտրուին և կազմուին նոյն իսկ Օգտագործողներէն:

7) Օգտագործողները չը պիտի վճարեն յետամնաց տուրքերը (պագայէ) և հինգ տարուայ պայմանաժամով տուրք վճարելէ ազատ պիտի լինին:

Ծանօթ. — Օգտագործող ունէր իբրեւ պազայէ (յետամնաց) ամեն տեսակ տուրքերէ, — ինչպէս օր. տասամորդական, գինւորական, կալուածական, եւ այլն, — նոյնպէս եւ փոխառութեան երկրագործական դրամատէն (պանքայէն), 70-էն մինչև 100 հազար օսմանեան ոսկի:

8) Հաստատում հարկերու համեմատական դրութեան. — Իւրաքանչիւրի կարողութեան համեմատ:

9) Օգտագործողներու կեանքը, ինչքը, պատիւը և կրօնական ազատութիւնը կապահովուի և կերպաւորուի Եւրօպական Պետութիւններու կողմէն:

10) Օգտագործողներու ապաստանած բոլոր հայ գիւղացիներու, ինչպէս և թիւրքերոյ այլ վայրերէն եկած և այնտեղ գաւառաւորած բոլոր հայ խումբերու և անհատներու ապահով և անվնաս վերադարձը իրենց տեղերը պիտի կատարուի քանակցող հիւպատոսներու անմիջական հսկողութեան տակ:

11) Օգտագործողներու ձեռքով զօրանոցէն գրաւուած պատերազմական գէներալներ (մարթիններու և երկու թնդանօթի) յանձնուը Օսմ. կառավարութեան,

այն պայմանով առկայ, որ Զէյթունի շրջակայ գաւառներու ամեն թիւը և Զէրքէզ գիւղացիներէն նոյնպէս վերցուի նոյնօրինակ զէնքերը: Զէյթունցիներուն պիտի մնան իրենց սովորական զէնքերը:

12) Համաձայն Զէյթունցիներու մերժման՝ ասոնք չը պիտի վերաշինեն այրուած զօրանոցը. այդ վերաշինութիւնը կը վերաբերի Օսմ. կառավարութեան:

13) Օսմանեան բանակը պիտի ձգէ Զէյթունի գաւառը և հեռանայ. միայն արտաքին յարձակումներու դէմ պահպանութեան համար պիտի մնայ մի գունդ զինուոր. այդ գունդը որ և է իրաւունք չունի միջամտելու Զէյթունի բոլոր ներքին գործերուն և անոր խաղաղութեան պահպանման:

14) Լաւօպական բանակցող Հիւպատոսները Զէյթունէն չը պիտի մեկնին մինչև ներկայ Պայմանագրի տրամագրութիւններուն անթերի գործադրութիւնը:

Ծանօթ. — 14 յօդուածին համաձայն Զէյթունցիներու կողմէ պաշտօնական բանակցողները պահանջ դրին նաեւ միջազգային երաշխաւորութեան պայմանի մը արձանագրութիւն Զէյթունի նոր ընթիմի պահպանման համար ընդդէմ ամեն անակցականներու Օսմ. քաղաքական եւ զինուորական իշխանութիւններու կողմէ:

15) Լաւօպական Պետութիւնները Մարաշի մէջ հիւպատոսարաններ պիտի հաստատեն. ասոնց պաշտօնը պիտի լինի հակել Զէյթունի նոր ընթիմին պահպանութեանը, մշտական գործադրութեանը և կիրառութեանը:

16) Հաշտութեան ներկայ պայմաններու գործադրութիւնը երաշխաւորուած է վեց Պետութիւններու Դեսպաններուն և Բ. Դրան միջև կնքուած պայմանագրով:

Ընդհ. Ծանօթ. — Ներկայ պայմանագրին բոլոր տրամադրութիւններու գործութիւնը կը տարածուի Զէյթուն քաղաքի եւ իր շրջակայ 100-ի մօտ գիւղերուն վրայ, ասոնց մէջ հաշտութեան 10-ի չափ թիւը քանակ գիւղերը եւս:

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԲԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ.

1895 ՆՈՅՆԵՐԵՐ 24-ԻՆ — 1 ՓԵՏՐՎԱՐ 1896.

(Շարունակութիւն) 1)

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԻՇԵՐԸ. — ԿԻՆԵՐՈՒ ԹԱՓՕՐՆԵՐԸ. — ԵՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ. — ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԴՀ. ԴԻՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹԵՆԱՄԻՒՆ. — ԽԱՉ ԱԼԷՄԸ. — ԹԵՆԱՄԻ ԲԱՆԱԿԻ ՅԱՌԱՋԻՍԱՂԱՑՈՒԹԻՒՆԸ.

Գիշերը մութ էր սեւ ամպի նման և կծու քամին մեղուի պէս կը խայթէր. իսկ գետինը ձգուած էր Աստուծոյ ձերմակ անկողինը՝ ձիւնը: Զէյթունի հերոսները պարտաւորուած էին առանց ծածկոցի գիշերել անցքերու վրայ և ղուլլաներու (պատսպարան) ետին. միայն պարբերաբար սահմանուեցան պահակներ, որպէսզի պատերազմիկներու մի մասը գնայ Զէյթուն:

Չիկար մէկը, որ գործունէութեան մէջ չը լինէր. ընտանիքի հայրն և մեծ որդին պատերազմի մէջ, էին, փոքր զաւակը կամ աղջկը հօրը պաշարը կը տանէր, մայրը հաց կը թխէր. միայն այս անգամ ռազմավթերը, որ միշտ կը պատրաստուէր շնչ կուսակցութեան նախաձեռնութեամբ և նիւթական օժան-

դակութեամբ, մասնաւոր խմբի ձեռքով կը բաշխուէր, պ. Միշհի կարգադրութեամբ. ընդհակառակը իրենց հին պատերազմներու մէջ, ամէն մարդ կը տանի եղել իր վառօդը և կամ իր իշխանների կանխապէս բաշխած ռազմավթերը:

Այդ բոլորէն վերջ, արդէն կէս օրին ջերմեռանդ Զէյթունցի կիները հագած էին վերստին սև-սև չուլեր և եկեղեցիէ եկեղեցի, մատուռէ մատուռ, խաչքարէ խաչքար թափօրներ էին կազմած և երգերով, շարականներով ու աղօթքներով օդը կը թնդացնէին և իրենց ասելով՝ «պիտի բռնադատենք Աստուածը, որ թշնամին մեր խաչքարէրէն¹⁾» ասդին չանցնէին: Ժողովրդի Աստուածը միայն գերազոյն ոյժն էր, որ կարծես ամէն բան կը դիտէր և կշիռէր մէջ էր դրած ապագայ անորոշ յաղթանակը, բաղդն ու երջանկութիւնը և որ կը խոստանար հակել կշիռի նժարը աւելի հաւատացեալի, աւելի քաջի, անձնուրացի ու գիտակցականի կողմը...

Նոյն օր հարիւրաւոր զոհեր ու մատաղներ էին եղած. խոստումների թիւը անհաշուելի էր. ամենաաղքատը նոյն իսկ կը խոստանար մէկ ամիս ձրի փորել վանքի այգիները:

Գիշերուայ ժամը երկուքն էր. քաղաքային ընդհ. ժողովը և Պատերազմական Խորհուրդը կազմուած էր Աստուածածնի ժողովասրահին մէջ: Կուսակցութեան ներկայացուցիչը ինչ կը նախագահէր: Նման չէր այն ժողովներուն, ուր խնդիր է լոկ անձնական գժուձ շահերու, որը ասպարէզն է ազնաւական վէճերու: Այդտեղ ամէնքը մէկ սիրտ, մէկ հոգի ու միաբերան էին. այդտեղի խորհուրդը կենաց և մահու խնդիր էր: Ամէնքն անշփոթ ու անխուով կը խորհէին, կորոշէին ու կը կարգադրէին:

Այդտեղ որոշուեցաւ.

1) Որպէսզի ժողովուրդն ամբողջութեամբ գնայ պատերազմի՝ պէտք է, որ սակապէս ձի հեծնան բոլոր իշխաններն ու աղաները իրենց զաւակներով ու ազգականներով միասին:

2) Նոյն այդ գիշեր ծանուցում անել բոլոր եկեղեցիներու մէջ և մունետիկ կանչել տալ փողոցներու մէջ, որ 14 տարեկանէն մինչև 70 տարեկան ծերը, ամէն դք, պատերազմի պէտք է գնայ յաջորդ օր, եթէ նոյն իսկ զէնք ալ չունենայ:

3) Միաբերան ուխտուեցաւ անխախտ և անդաւաճան կռուիլ մենչև վերջ, նշանաբան ունենալով «Մահ կամ Ազատութիւն»:

4) Ամէն պարագայի տակ ուէ համաձայնութիւն կամ կարգադրութիւն պիտի լինի շնչ. Կուսակցութեան ներկայացուցիչ և գործիչներու գիտութեամբն ու կարգադրութեամբը:

5) Ուէ ձախորդ պարագայի տակ, եթէ հայերս չի կարողանալինք այլևս գիմադրել թշնամիի լեռան վրայ, երբէք չը պիտի խոյս տրուէր մինչև Զէյթուն, այլ պէտք է որ—Ա. Եկնիտիւնեան թաղեցիները ապաստանին ս. Աստուածածնայ վանքը՝ հաւասար գծի վրայ պահպանելով նաև «Պուշաղընց մօտը» ուսած բլուրը: Բ. Սուրենեան թաղեցիները ապաստանին Զօրանոց և մզկիթ. Գ. Բող-պայիրցիների ու Կարկալարցիները մտնեն Զօրանոցի շրջակայ մնացած տները, նստին և ղուլլա-

1) Տես «Նշաղ» 1895 թ. 23, 24 եւ 1896 թ. 1, 2, 3 8. 4 9.

1) Զէյթունի 4 անցքի վրայ, Զէյթունի հագիւ 200 կանգուն հեռու, 4 խոշոր ժայռ կայ, որոց վրայ դրած են 4 խաչ. ոչ մի պատերազմի մէջ թշնամին չէ աշխուժ այդ քարերն անցնել: Ծ. Թ.

ներով փակեն, ճապող չալիքը մինչև գետ:
Բայկ ուրիշ կարևոր կարգադրութիւններ թողուցինք ընդ. հրամանատարութեան, նայելով որ յաջորդ օրուայ պատերազմը ինչ կերպ և որ ուղղութեամբ տեղի կունենար:

Ժողովը վերջացաւ գիշերուայ ժամը 4-ին: Այդ միջոցին ներս մտաւ Զէյթունի կիներու պատգամաւոր և Սիրական ընկերութեան պարագլուխներէն Մարիամը, որ իր «ճգնաւորի և գուշակողի» անունով մեծ հեղինակութիւն ունէր Զէյթունի տգետ, բայց ջերմեղանայ մասի վրայ, և որ իր այդ հեղինակութեամբը շատ օգտակար հասկացաւ սկիզբէն մինչև վերջ ապստամբական գործին: Մարիամը յայտնեց կիներու խնդիրքը, որ յաջորդ օր պէտք է քաշուի Խաչ-Ալէմը (ընդհ. փրկարար Խաչը) պատարագով, քահանաներով ու կիներով:

Ինչ որ տեղի ունեցած էր անցեալ պատերազմներու մէջ, կրօնական ջերմ զգացումները կը պահանջէին նոյնը տեղի ունենար ներկայի մէջ: Ուստի ժողովը միաձայն համաձայնութեամբ ընդունեց, իրենց տեսակէտով խրախուսական այդ առաջարկը:

* *

Ղեկտեսներ 3, կիրակի առաւօտն էր, մի կարմիր առաւօտ: Գեռ չի ծագած արեւու ձմեռնային թող ճառագայթները, Զէյթունի խուռն բազմութիւնը կը դիմէր դէպի Զօրանոց, երկար թափորով, որի առջևէն կը գնար «Տապանակ Ուխտի» ի սման բարձր բռնած «Խաչ-Ալէմը»: Քահանաները զգեստաւորուած էին պատարագի զգեստներով. կիներու սեւ-սև չուլերը միշտ իրենց վրայ էին, որպէս թէ դժուրքի սեւցած մեղաւորները լինէին: Ամենքը կերգէին «Նինուացող շարականը», երբ կանգ առին զօրանոցի առաջ: Ամենքը ալ հաղորդուած էին և քահանան իր վերջին արձակումը կարդաց:

Այդ միջոցին գուրս եկաւ նաև զօրանոցէն պ. Աշաֆն «Աւօ» զօրագնդի մնացած մասի հետ: Հերոսներու բազմութիւնը սկսաւ նոյն ապաշխարական շարականներովն ու երգերովը միասնուն հետեւիլ իր առաջնորդին դէպի պատերազմի դաշտը...

Իսկ ինչ աւելի զմայլելի ու ոգեւորիչ քան այդ նոր սպարապետի կիները, որոնք բազմի ու փառքի երգ կերգէին իրենց ամուսիններուն ու զաւակներուն և զանոնք համբուրելով կը նետէին մահի ասպարէզը, նոյն իսկ կը փափաքէին ընկերանալ մինչև լերան գագաթը, ակամատես լինելու արիւնալի բայց փառապանծ տեսարաններուն... Ո՛վ չի պիտի զարմանայ ու հիանայ մանաւանդ այն իմաստալից խօսքի վրայ, որ մի քանի կիներ բարձրաձայն պատասխանեցին, երբ իրենց կը պնդուէր թէ «ալ մի գաք մեզ հետ»:

— «Զէ, չէ, կիներն ալ թող գան, կիներն ալ ինքը քրիստոս, մի կնաջ արգանդէն ծնաւ. կարելի է անոնց բարեխօսութիւնը կը լսէ»...

* *

Առաւօտեայ ժամը 12-ին հայկական բազմութիւնը հասած էր Ադ-Տաղիի ու Էշէք-Մէյտանիի վրայ: Թնդանութեամբ Օղուլուխեան Մանուկը ամենքի առջևէն հառուցած էր ջորիներն, որի վրայ բեռնուած էին մի թնդանութ, ախլաններն ու սուսերը: Թնդանութեամբ խուճար կազմ ու պատրաստ ուղևորական յարմար կէտի վրայ դրաւ Էշէք Մէյտանիի մէջ:

Միւս կողմէ թշնամի բանակի դրութեան յայտ-

նի էր, որ այդ օր թշնամին իր առաջին յարձակումները չը պիտի գործէ Սաղիւրի և Ալի ձորի ուղղութեամբ, ուստի այդ անկիւնները փակող քաջերի մեծագոյն մասը ուղարկուեցաւ դէպի Սանդուղի կողմերը, իսկ իրենց պակասը լրացուեցաւ անգլէն մարդերով ու պատանիներով, որոնց հրամայուեցաւ իրենց ուսերին դնել որթատունկերի փայտեայ ցիցերը, թշնամին հեռուէն զգալ չի տալու համար Հայերի կիսովին անգլէն լինելը:

Իսկ Սանդուղի կիրճը ընտրեալ քաջերէ լաւ կերպով փակուած էր. այնտեղ էին նաև իշխանների մեծագոյն մասը:

Սոցա մէջն էին Նազարէթ իշխանը, Զէյթունի մեծագոյն հերոսը և քաջ ուղևորագետը, Նազարէթ աղա Կիւլվանէսեանը, Պապ աղա Վասիլոսեանը, տէր կարապետ քահանան և այլն:

Իսկ Ավաղ Կէտիկի ամենաբարձր ու ցուրտ տեղերը արդէն փակուած էին Եէնիտիւնեան թաղեցիներով ու Ալաբաշոյի վագոններով, որոնց ամառնային օթեանն էր արդէն:

Կէս օրուայ մօտերը Գրոնուզի պատերազմի ձայնն ալ սկսեց խիստ թեթեւ կերպով լսուիլ և միայն թանձր ծուխը պատած էր այն կողմի երկնակամարը. խուլ և շփոթ լուրեր հասան մեր դէմքերը ծամածռուելու. կտրուած էր մեր յոյսերը մեր սիրելի ընկերներու մասին, որոնք իբրև թէ մեռած էին հերոսաբար:

Իսկ մեր թշնամին առաւօտեայ մինչև ժամը 2-ը ոչ մի շարժում չի գործեց: Ժամը 3-ին միայն ըսկան գողալ փողերը և լորբական ժիւղը կենդանութիւն ստացաւ:

Ս. Փրկչի վանքի վերեւն ոլորապտոյտ, բայց միշտ շեշտակի ուղղութեամբ սկսան բարձրանալ դէպի լեւրան դագաթը, դէպի Ավաղ Կէտիկի դիմացը, երեք սիւնակ զօրքեր. այդ զօրքերը կային մօտաւորապէս վեց հազար: Այս գնացքով և ինչպէս վերջը պիտի տեսնենք, թշնամին պատերազմի սկիզբէն մինչև վերջը ջանաց միշտ գալ և գրաւել լեռներու ու բլուրներու բարձունքները. նորա ջանքն եղաւ ոչ միայն ջնջելու հայերու պաշարման ներքեւ, այլ և ինքը պաշարելու ջանաց, ինչպէս և մէկ այլ մտքով, հակառակ պարագային անվտանգ նահանջելու ճանապարհ ունենալ:

Այդ երեք սիւնակներու երկուսը գագաթեցաւ ճիշդ Ավաղ Կէտիկի դիմացը, իսկ երրորդը յետագնաց ընթացքով անցաւ Աթլըզ լեռան բլուրներու ետեւ, ուր պահուած կայ եղեր նաև Ալպիստանի կողմերէն հաւաքուած Էրիճէքի բանակը, 8,000 զինուոր:

Այդ սիւնակներու ետեւէն սկսան յառաջանալ երկու սիւնակ ևս ճիշդ Աթլախի մեծ բանակէն և վանքի վրայէն անցնելով սկսաւ կողմնակի ուղղութեամբ լերան կողքերէն յառաջանալ: Այս զօրքերն ալ կը լինէին մօտաւորապէս հինգ հազար: 1) Սորա սկսան առաջանալ ուղղակի Սանդուղ պատաստած հայերու վրայ:

Մէկ այլ երրորդ մեծ սիւնակ սկսաւ առաջանալ վանքի ստորոտէն դէպի Յուրթատար գիւղ, Էշէք-Մէյտանի ուղղութեամբ: Զուա թիւը կար մօտ 10,000: (Կը շարունակվի) ՏՕՐԱՅԻ.

1) Թիւերի մասին չէ կարելի անհերքելի ծիշը խօսիլ, բայց Զէյթունցիները, փորձառապէս այնքան վարժուած են, որ շատ քիչ անգամ կը խաբուին, և ևրբեմէ շատ մօտ կը գուշակեն ճշմարիտ թիւը, երբ կուզեն մի բազմութեան քանակութիւնը որոշել:

ՆՇԱՆԱԻՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ՖԻՆԱՆՍԻ ՄԵՋ.

Հայկական փոքրամթիւ խումբն ալ հարիւրաւոր բոցեր վառելով բարձր բլուրների գագաթին՝ կը պատ-
րաստուէր առաւօտեայ մեծ պատերազմին Հնչակեան
գործիչ պ. Հրաչեայի հսկողութեամբ և ղեկավարու-
թեամբ: Օգնութեան հրաւերը արուած էր մեր կող-
մէ. ամէն անգիւրէ խումբ խումբ կը դիմէին հայ գիւ-
ղացիները դէպ ի Աղալը-ի գագաթը: Արշալոյսի միջո-
ցին հաւաքուած էին արդէն մօտաւորապէս 100-ի չափ
կարծի հայ զինուորներ:

Առաւօտեայ դէմ՝ բարձր բլուրներէն յայտնի կե-
րեար թշնամու բանակը մեծ հեռագիտակի միջոցով
թշնամին սկսած էր յառաջանալ. ամբողջ լեռները,
ձորերը, ճանապարհները շէրքէզներով, պաշլպօզուդ-
ներով, սև հագուած զինուորներով ծածկուած էին.
թշնամու թիւը կը հաշուէր մօտաւորապէս 10 հազար:
Մեկը կը տեսնէինք սոյն անհամեմատ մեծ ոյժը, որը
կը քալէր մեր վրայ, մեր փոքրամթիւ կամաւոր բանակի
վրայ:

Ժողովրդային կամբը սակայն, զօրաւոր էր. ամէն կող-
մերէ կը լսուէին «պատերազմ, պատերազմ». մեռնել կամ
սպանլի, խօսքերը. սորբ և պաշտելի էր ռամիկ ժո-
ղովրդի այն սքանչելի աւելը, որով կը մղուէր իր
իրաւունքների, իր պատուի, իր զաւակների համար
ուրախութեամբ և գիտակցաբար թափել կարմիր
արիւնը, պսակուել մահի հետ...

Հարաւ օրը, առաւօտեան ժամը 12-ի միջոցին,
թշնամու ահագին բանակն իր ամբողջութեամբ մեր
դէմ կը գտնուէր հազիւ կէս ժամ հեռաւորութեամբ:

Մենք ունէինք ընդամենը 30-ի չափ մարթիւնի.
իսկ մնացած զէնքերը չախմախի հրացաններ էին: Փոք-
րիկ խումբը բաժնուեցաւ երեք թևերի 30-ական կրտ-
սիճներէ բաղկացած, և տասը վայրկեան հեռաւորու-
թեան վրայ յարմարագոյն դիրքեր ընտրած ցրուեցան
իրենց տեղերը: Առաջին խմբի գլուխն էին անցած «Աւօ»
զօրագնդի տասնապետներէն համբաւաւոր և կործէ ե-
րիտասարդ Շիվիկիցի կարապետ և նոյն գիւղացի Ա-
շք-Ղազարը: Երկրորդ խմբի գլուխն էին Գրանդի
գիւղացեալ և իր գործերով նշանաւոր Հաճի Զինկիւզ-
եան և ճէլազի եղբայր Նիրահոսը: Երրորդ խմբի գլ-
ուխն էր Թէլէմէլիք գիւղի Ս. Մարտիրոս քահա-
նան:

Հայ անձնուրաց կարծիները քարերի և զուլանե-
րի (մարտկոց) ետին նստած, առանց աղմկի կըսպա-
սէին թշնամուն: Ժամը կէսի միջոցին, իբր պատերազ-
մի նշան, թշնամու կողմէ նետուեցան երկու թնդա-
նօթներ, որոնց անդրանիկ ումբերն ինկան Հայերի
մարտկոցների մօտ:

Արևի ծագման միջոցին թշնամու բանակն իր ա-
հագին բազմութեամբը մեր դէմն էր մօտաւորապէս
1000 քայլ հեռաւորութեամբ: Իւրաքանչիւր 5 վայր-
կենի մէջ մի-մի զօրագունդ, կարգ-կարգ, կանչա-
տուէր բանակէն և 50 քայլի չափ այդ կարգով ըն-
թանալէ յետոյ, կը ցրուէր և խառն ի խառն, ձորերի
միջով, ժայռերի ետևով դէպի մեզ կը յառաջանար:
Այս եղանակով թշնամու կէսէն աւելին ցրուած էր
մեր դէմ՝ կէս ժամայ միջոցին:

Հրացանաձգութիւնը սկսուած էր և հազարաւոր
գնդակներ կը վժվժային երկու կողմէ: Թէպէտ մեն-մի
վայրկենի մէջ անընդհատ կարճակուէին թնդանօթ-

ները, թէպէտ թշնամու գնդակները սոսկալի քանա-
կութեամբ, կարկուտի նման կը թափուէին մեր գլխին,
սակայն ոչ մի վնաս, ոչ մի հարուած չէին աներ մեզ,
իսկ ընդհակառակը մեր գնդակները երբեք չէին վնի-
ւէր: Ժամը 3-ի ատեններն ամեն կողմերէն յարձակու-
մը սաստկացաւ. թիւրք զօրապետները թուրերը մերկա-
ցուցած կըստիպէին իրենց զինուորներին յարձակում գոր-
ծել, յառաջանալ գնդակների միջով: Մեր Ա իրենց մէջ
կերկուրէր կազմակերպով պատած մի ձոր, որտեղէն ան-
կարող կը լիւնէին անցնել, վասն զի կործիճ Հայերի գըն-
դակները վայր կը գլորէին անոնց: Ժամը 4-ի ատեն-
ները 1000-ի չափ զինուորներ սաստիկ յարձակումով
աշխատեցան պաշարել մեր աջ թևի գունդը, սակայն
հերոս Շիվիկիցի կարապետի և քաջ ընկերների կորո-
վի դիմադրութեամբ չը կրցան յաջողուել. կամաւոր հե-
րոսների արձակած գնդակները կը կասեցնէին անոնց
կատաղի ընթացքը:

Մինչև այդ ատենը դեռ Հայերէս ոչ մի կա-
թիլ արիւն չէր թափուած, մինչդեռ տասնեակներով
թշնամու դիակները թաւալազլոր կը լողային ի-
րենց արիւնի մէջ: Թնդանօթների դիրքերը փոփո-
խեցին աւելի յարմարագոյն վայրերի վրայ, սակայն
ուռմբերը ոչ մի վնաս չէին հասցներ մեզ, հեգնու-
թեան ու ծաղրանքի առարկայ կը դառնային: Ժամը
6-ի ատենները յարձակումն ամէն կողմերէ սաստկա-
ցաւ, թնդանօթների և հրացանների ծխէն հետզհե-
տէ ամպեր կը գոյանային մթնոլորտի մէջ. թիւրք
զինուորներ աջ թևերով դէմքերնին գցած և ձախով
հրացանը բռնած կը յառաջանային դէպ ի մեզ. հա-
րիւրաւոր ձիաւորներ կը վնասային բարձր բլուրների
գագաթները, ձորերի մէջ, մեզ պաշարելու համար: Մենք
ուրախութեամբ և արհամարհոտ ինքնավստահութեամբ
կը կուռէինք, սակայն ցաւալին այս էր, որ մեր ուղղմամբ-
ութեքը սկսած էր հատնել: Երեւակայեցէք մի ահաւա-
սար և սոսկալի պատերազմ, 100 հոգին 8-10 հա-
զարի դէմ՝ ամբողջ 7-8 ժամ... մեք մեր գնդակները
խնայելով կը նետենք, մինչդեռ թշնամին, հաղարները
մէկ անգամէն՝ առանց վախ ունենալու սպառնէին...

Ժամը 7-ի ատենները թշնամին շնորհով իր
անհամեմատ բազմութեան, մէկ, մէկ ու կէս ժամ հե-
ռաւորութեամբ գտնուած բարձր բլուրները, լեռնե-
րն ու անցքերը գրաւած էր: Արդէն մեր ուղղմամբը
գրեթէ հասած և ֆռնուզէն փոխադրէն անկարելի էր,
մանաւանդ չը գիտէինք թէ շուգուր-Հիսարի և Թէքլիթի
կողմերի պատերազմներն ինչ դուրսէն մէջ էին, վա-
սըն զի այդ կողմերն ալ մեզ հետ միաժամանակ պատե-
րազմներ տեղի կուենային:

Ժամը եօթն ու կէսի միջոցներին այլ ևս չունէիք
ոչ մի ուղղմամբը, որով ստիպուած եղանք գիւղ իջ-
նել թշնամու հազարաւոր գնդակների և ումբերի մէջէն,
որոնք ամէն կողմերէն մեր գլխին կը թափուէին, ինչպէս
կարկուտ: Այլևս չեմ նկարագրեր հոս մեր միջև ֆռնուզ
վերադառնալը, միայն սա ասեմ, որ այդ 7-8 ժամայ ան-
հասար և սոսկալի պատերազմի մէջ Հայերէս ընկան
միայն 2 հոգի և 3 վիրաւոր, մինչդեռ թշնամիներէն
150-էն աւելի...

Ֆրանսուզը մօտաւորապէս երեք հարիւր տնէ բաղ-
կացած և Զէյթունէն 8 ժամ հեռի հայկական մի գիւղ է,
փոքրիկ հայ թափառի վրայ շինուած: Գիւղի հարաւա-
յին կողմէ 50 մէթրի չափ ցածութեամբ կը հոսի համա-

նուն գետակը, որը գոյալալով Չուգուր-Հիսարի բարձր լեռներէն, սոսկալի գահավեժներով կանցնի նոյն լեռների նշանաւոր կիրճի մէջէն: Գիւղի անմիջապէս վերեւը, արեւմտեան կողմը, կը բարձրանան Չուգուր-Հիսարի մերկ և ապառաժուտ սարերը, որոնք շարունակութիւնն են Կապանի և Կօկիաօնի լեռնաշղթային:

Դամբ 9 ու կէսի ատենները պ. Հրաչեան անցնելով և փոխել տալով յիշեալ գետակի փայտեայ Կանտարէն (կամուրջ), բարձրացաւ Ֆրոնտուղ: Աղալը-ի թշնամու բանակը արդէն հեռուէն կը նշմարուէր Ֆրոնտուղի դէմը՝ գետի միւս եզերքը գտնուած բարձր բլրների վրայ: Այդ միջոցին Ֆրոնտուղի մէջ նախապատրաստութեան գործով կը զբաղուէին: Գետակի երկարութեամբն առաջուց շինուած ղուլաները (մարտկոցները) կը բարձրացնէին, նոր-նոր ղուլաներ փորելով՝ քարերով կը պատէին. մեր ղուլաները երկարած էին Ֆրոնտուղ լեռան ստորոտէն, գետի եզերքով մինչև վարի կամուրջը, մօտաւորապէս 200 մէթր երկարութեամբ: Գիւղի հիւսիսային կողմի տներէն ամուր և պատերազմի յարմար դիրք ունեցող մի քանին նոր պատուհաններ և հրացանի ծակեր բաց անելով՝ պատերազմելու յատկացուցին:

Իրենց բաջագործութիւններով նշանաւոր Տ. Մարտիրոս և Տ. Ղեւոնդ քահանաները, նշանաւոր գիւղապետները, կիները՝ մտած ժողովրդի մէջ, տները, փողոցները՝ կողեւորէին. անոնց եռանդով քարուքեր և խրախոյս կը կարգային. արդէն ազատութեան տենչով վառուած ժողովուրդը, տեսնելով իր կրօնաւորների, գիւղապետների սոյն ոգեւերիչ ընթացքը, անոնց գովելի աննկուն ոգին, առաւել ևս կը յուսադրուէին, նոր ոգի կը ստանային՝ կը փափաքէին ժամ առաջ նետուել պատերազմի կրակների մէջ, կարմրած գրնդակների առջև...

Ժողովրդի ամեն խաւերի մէջ կը լսուէին «մանրունք, պլէզ, ուղուցէք. ով սիլահունի ղուլաների խէջը», տասը վայրկեանի մէջ բոլոր զէնք ունեցողները լրացնելով իրենց պէտքերը — փամփուշտ, վառօթ, գնդակ ևն, կարգ կարգ շարուեցան մարտկոցների ետին հրացանները՝ գրած ծակերի առջև: Թէպէտ մենք քիչուր հաղիւ 4-500 կտրիճներէ բաղկացած, իսկ, թշնամին, ընդհանրապէս, կը համարուէր հազարներով, այսու հանդերձ մենք աւելի գոհ, աւելի ուրախ էինք. հայ կտրիճները ծիծաղելով, ցատկելով կը գնային մարտկոցների ետին, ինչպէս հարսանիքի կամ ժողովրդական տօների ատեն...

Այս միջոցին, մինչ մենք կը պատրաստուէինք հարաւէն եկող թշնամու դէմ՝ Ֆրոնտուղի հիւսիսային կողմը Թէքիը կոչուած վայրը տեղի կունենար արեւնահեղ պատերազմ: Ուրբաթ օրը պ. Ապահար պ. Նշանի և պ. Կարապետի հետ մի խումբով կը բարձրանան Չուգուր — Հիսարի նշանաւոր կիրճէն վեր, դէպի Ալաւաճիների գիւղը, սակայն մինչև պ. Ապահար հոն հասնելը թշնամին գրաւած լինելով այդ գիւղը, ստիպուած կը լինի պահել կիրճի բերանը: Հայկական խումբն այդ գիւղեր բազմաթիւ բոցեր վառելով բարձր բլուրների վրայ կ'ըսպասէր մինչև առաւօտ: Առաւօտը տեսնելով, որ թշնամին չի համարձակիր այդ կիրճէն անցնել, այլ իր ընթացքը կուղղէ միւս ճամբով, Թէքիըի վրայով, ուր համեմատաբար չըկային նեղ ու դժուարին անցքեր, պ. Ապահար կ'ըստիպուէր կրկին Ֆրոնտուղ իջնել և խումբը շատացնելով գիմել դէպի Թէքիը:

Դամբ 5-ի ատենները պ. Ապահար խումբը, հազիւ 60-70 կամաւորներէ բաղկացած, կը հանդիպէ թշնամու երկրորդ բանակին, որը կը հաշուէր, մօտաւորապէս 4-5 հազար հոգի: Հոգ ներկայ էին յայտնի գիւղապետներէն հաճի Մարտիրոս Շատալախեան, Աւետիս Տնտեսեան և Կարապետ Գլուեան: Հայերի մի մասը նստած էր մարտկոցների ետեւ, իսկ միւս մասն ալ հաստատուն վայրի ծառեր էր ընտրած. երկու կողմէ հրացանաձգութիւնը տեղի կունենար սաստիկ արագութեամբ. թշնամին պէտք էր յառաջանար մի տափարակ գետնի վրայով: Երկու անգամ սաստիկ յարձակում գործեց կատաղի կերպով, սակայն երկու անգամին ալ հայերի գնդակներէն ետ մղուեցաւ:

Դամբ 7-ի ատենները, կուռի ամենատաք ժամանակին զարնուեցաւ Մխալի գիւղապետներէն յայտնի հաճի Մարտիրոս Շատալախեանը: Նա կը պատերազմէր երկու մասի բաժնուած մի հաստատուն կաղնու ետեւէն, ուր յանկարծ մի գնդակ միտուելով սրտին դուրս կելլէ կոնակի կողմէն: Հարուածը մահացու էր, սակայն այդ ժողովրդական հերոսը, այդ նշանաւոր գեղջուկ ասպետը, «զէն չըտար, զէն չըտար» կրկնելով և խրախուսական խօսքեր կարգալով ժողովրդին՝ կը շարունակէր իր եռանդուն պատերազմը, իր պաշտած գործը:

Կարժէ մի քիչ խօսիլ այս գիւղացի մեծ մարդու մասին: Հաճի Մարտիրոս Շատալախեանը որդին էր Մխալի առաջին և հարուստ գիւղապետ Մաւիլարին, որն իր ժամանակին հեղինակաւոր մարդն է եղեր տեղական հասարակութեան մէջ. կատարել է շատ նշանաւոր գործեր և թիւրք կառաւարութեան ու թիւրք խուժանի դէմ մղեր է շատ կռիւներ: Հաճի Մարտիրոսը հազիւ կը լինէր 32 տարեկան մէջ: Հակառակ իր այդ տարեկան, նա արդէն աւելի հեղինակաւոր և ժողովրդականացած էր քան հայրը. նա նշանաւոր էր իր երկար հասակով, վայելուչ ու սիրուն դէմքով, քաղցր, լուրջ և անկեղծ բնավարութեամբ: Գիւղացիների մէջ ամենախելացի ու զարգացածը կը համարուէր. մանկութեան ժամանակ յաճախած է Մարաշի և Զէյթունի ազգային դպրոցները: Ուշիայի յեղափոխական դադտնի կազմակերպութեան, ապստամբական գործերին և գրեթէ բոլոր պատերազմներին մասնակցած է հերոսական անձնուիրութեամբ և գործունէութեամբ: Սաստիկ կը համակերէր և կը սիրէր յեղափոխականներին. կը փափաքէր օրերով ապրել և մնալ մեզ հետ. չէր թողուր որ միակ ճամբորդէինք, անպատճ ու ընդմիջտ նա պիտի ընկերանար մեզ: Միշտ կը կրկնէր՝ «ամբողջ ունեցածս, այգիներս, ըզլակներս, կեանքս պիտի զոհեմ ազգիս համար, ազատութեան համար» և նա, գործնականի մէջ, աւելին ըրաւ: Միւշև ապստամբական շարժումների երևան գալը նա գաղտնի կերպով օրերով ու շաբաթներով օգնեց, պահեց, ուղեցոյց եղաւ մեզ և մեր առաջատակային խմբերին: Ուշիայի յեղափոխական բոլոր գործերի մէջ իբր տեղական մարդ, իբր ժողովրդական հերոս, ընդմիջտ մեզ անձնուէր և անկեղծ ընկեր՝ հաճի Մարտիրոսը երկրորդ անձնաւորութիւնը կը համարուէր: Նա շատ կը սիրէր ձիերով արշաւանքի գնալ հեռի տեղեր. երբ իր գեղեցիկ ձիու վրայ բարձրանար փամփուշտները շեղակի ձգած կրծքին սւ մարթինին երկարած ծնկների վրայ, երբ կը հրամայէր և կը կարգադրէր հայ արշաւող կամաւորները համարեա հմուտ մի պատերազմիկ զօրապետ էր՝ թագնուած իր ուշիական գեղջուկ տարազի տակ:

Վերադարձվել է կես ժամ յետոյ ուսանողաց և արհեստագործական վիճակի մէջ դարձեալ չուզեր դադարիլ պատերազմելէ: Վերջապէս երբ կը տեսնէ թէ անկարելի է մնալ այդտեղ, կը ցատկէ կարմիր ձիուն վրայ և թռչնամու հազարաւոր գնդակներ թափելով սուրալով կը հասնի կէս գիշերին Մխալ, իր հօրենական տունը, ուր ձիէն իջնելէ կէս ժամ յետոյ կը մեռնի...

Եւ մեռաւ և զոհուեցաւ իր սիրած ազատութեան և պաշտած հայրենիքի համար, սակայն կենդանի է ընդ միշտ յիշատակը մեր սրտի մէջ և անմահ՝ Զէյթունի ապստամբական նոր պատմութեան մէջ:

Ժամը 8-ի տեսները թշնամին տեսնելով, որ յարձակումով չը պիտի կարողանայ ետ մղել Հայերը, փողով կը հրամայէ մի վաշտը լեռան վրայէն Հայերի ետեւը առնել. թշնամու բազմութիւնն խիստ շատ էր բաղդատմամբ Հայերի թուի, որի շնորհով կը կարողանար ամեն կողմէր պաշարել, ամեն անցքերէ յառաջանալ: Այս կողմի պատերազմի մէջ կը գտնուէին նաև «Աւո» զօրագնդի խմբապետներէն՝ Նշան Ղազարոսեան և Կարապետ Սուքիասեան կտրիճ և անձնուէր երիտասարդները, որոնք ինչպէս ամեն կռիւների, նոյնպէս այս կռուի մէջ հերոսաբար կռուած են թշնամու հազարների դէմ:

Վերջապէս ժամը 6-ի տեսները Հայերի ռազմավթերը հատնելով և նաև անկարելի լինելով երկարատեն գիմարելու ստիպուած եղան նահանջել:

(Կը շարունակվի)

Հ.Մ.

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԵՐԱՍՏԻՈՑ

(Շարունակութիւն) 1)

ԿՈՏՈՐԱԾԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոյն օրը թուրքերն սկսած էին մասնաւոր պատճառներ փնտռել և վէճեր յարուցանել Հայերու հետ կռուի բռնուելու համար. բայց Հայերը տեղի չէին տար... Հասաւ կէսօրը. թուրքերը կատաղած՝ Նշանի մը կը սպասէին, և այն եղաւ մոլային էզան կարգալը, որով այս անգամ իսլամները կը հրաւիրէր ոչ թէ աղօթել, այլ կ'ետ վուրները ջարդելու: Մէկ վայրկեանի մէջ բոլոր թուրքերը ոտքի կ'ելնեն. ամեն կողմէ պատրաստուած խուճեր՝ իսլամական գրգռիչ Նշանակներ և գրօշներ ի ձեռին, շուկայի կողմը կը գիմէին. իրենց կառաջնորդէին մի քանի տասնեակ պաշտպաններ: Հայերը, սարսափահար, իրենց խանութներուն ներսը կը փախչէին: Զինուորական փողը կը հընչէր, անգէն մնացած թուրքերը վէրքի միջերանցը կը հրաւիրէր անոնց վէրք տրուելու: Կառավարութեան պալատին մէջ թապուրը աղասի Մէհմետ Էֆէնտին իր շուրջ կը հաւաքէ Նշանաւոր թուրք սրիկաներ, ամենուն կուտայ մարմինի հրացան և փամփուշտներ և հրաւեր կը կարգայ անոնց կոտորել Հայերը և ինք ամէնէն առաջ կը կատարէ Սուլթանի հրամանը, յանկարծակի սպանելով Թադէոս Գաբրիէլեան անուն Հայը և բարձրաձայն կըսէ. «Տաւա Կուտամ»՝ ձեռք գործնական օրինակը՝ սպանելով կ'ետ վուրը այս պալատի մէջ. վստահ եղէք որ կայսերական իրատէ կայ հայ ցեղը բնաջնջ ընելու: Այդ սրիկաները թուրք ազատի սենեկէն գլուս կը ցատկեն, և կը սկսի արիւնալի կռիւը: Շուկայէն տուններ տանող ամեն փո-

ղոցի գլուխ զինուորներ կերելն Հայոց խնցուղարձը խափանելու համար. վայ այն Հայուն որ փախչիլ ձգնէր խուճանին հարուածէն. զինուորներու սուխնէն կը սպաննուէր: Քառորդ ժամ չէր անցած, կառավարութիւնը տեսնելով թէ՛ Հայերը բոլորովին առանց դիմադրութեան ոչխարի պէս մորթուիլ չեն ուզեր, և թէ իր դինամ պաշտպանները առանձին անկարող են բնաջնջ ընելու հայ տարրը և թէ այդ վարձկան գործիքները մեծ կորուստներ պիտի կրեն գիմարող Հայերէն, պաշտօնապէս միջամտեց: Հրամանատար Խուրդ-սի փաշան, կառքի մէջ նստած և զինուորներէ շրջապատուած՝ յանկարծ փողն հնչեցուց, փող շարունակ կըրակ ընելու: Հոս տեսարանը անկարագրելի է. արիւն ամէն կողմ... Պաշտպաններուն բոլորն ալ իրենց ֆէսերու շուրջը ձերմակ փաթթոց կապած՝ յաւիլ-լահ՝ ի գոռում գոչումով Հայոց վրայ կը յարձակէին. տապաւորները խանութներու գոշերն ու փեղկերը կը կոտորէին. մէկ Հայու վրայ 50 թուրք կը յարձակէր. երբ տեսնէին թէ նա պատրաստ է ուժովէր ի ձեռին քաջութեամբ կռուելու, այնչափ թուրքեր գիւրար կոխոտելով կը փախչէին. իսկոյն զինուորներ կը հասնէին և հեռուէն կը զարնէին խեղճը հրացանի գնդակով: Իբր թէ բաւական չէր զինուորներուն ծածկան կտրելը, եզան սայլեր, քաղաքապետութեան աղբ կրելու կառքեր, ծառի ճիւղերէ շինուած յարդ կրելու չէ թէ նոյն եր փողոցներուն առջև դիզած էին իբր պատնէշ, որպէս զի մի գուցէ Հայերը տներն ապաստանելով իրենց ուժերն հաւաքեն ու փոխարինեն: Կռիւն ելծալով կը սաստկանայ, հարիւրաւոր թուրքեր հանդիպած Հայուն, յաւիլ-լահ՝ ըսել կը բռնադատեն. թէ չընդունի՝ կըսպանեն. եթէ ըսել յանձն առնէ, դարձեալ կըսպանեն, որ մի գուցէ չղջալով նորէն քրիստոնեայ դառնայ, մինչ պէտք է «արդար» կ'ընի մէջ մեռնի: Ո՛վ բարբարոսութիւն. Խալափ Նալահ՝ ը արիւնէ չի յագնար և եթէ մէկը լա-իլլահ կ'ընելով մեռնի, իր հազարաւոր հիւրիները ժառանգելու իրաւունքը պիտի ունենայ, և այդ «Նալահ» իր «ճէննէթը» լեցունելու տեսնով կը վառի... Մարդկութեան, 19րդ դարու լուսաւորութեան դէմ նախադիմաբար եղող այս քստմենի անցքերու առջև մարդկային միտքը կըմբոստանայ: Որչափ ալ գրուի, անկարելի է նկարել այն ահաւի տեսիլը որուն մատնուեցաւ քաղաքը: Զինուորները զարկին շարունակ և թուրք խուճանը յարձակելով վերաւորութեան վրայ, որոնց շատերն աշուշտ կրնային առողջանալ, քարով ու փայտով անոնց գլուխը կը փշթէր և անոնց հանգերնները կը կողոպտէր: Հոս թշուառի մը գլուխն է ձգմուած և մարմինը կ'ետմեռ, հոն խողովողուածի մը արիւնն է որ կը ցայտէ. հոս օրհասականի մը խուլոտ ձայնը կը լսուի, հոն մի վերաւոր մի կաթիլ ջուր կը խնորէ. մի այլ տեղ կը տեսնես վերաւոր մը՝ անկարող ոտքի վրայ կենալու. իսկ թուրքերը՝ կէլ, սանապէտիք վէրէճէտիլ՝ ըսելով՝ կը պառկեցունեն զայն և ոչխարի պէս կը մորթեն. մի ուրիշ տեղ կը տեսնես որ բարձր շէքերու պատուհանէն Հայերը կը նետեն փողոցի սալայատակի վրայ. եթէ ողջ մնան՝ վարը կեցող թուրքերը պատրաստ են զանոյք մահացել: Երբ մի թուրք Հայու մը յեղափոխական լինելը՝ վկայէր, զայն մէկէն չէին սպաննէր. կը մերկացնէին և խոշոր կոճղերու ահագին հարուածի տակ կը ջախջախէին, այնպէս որ գիակը անձանաչելի կը դառնար: Ոմանց ալ

1) Տես «Նշանակ» թ. 7.

նախ ձեռները, յետոյ սրունքները կը կտրէին, և կը տեսնես որ խուժանէն մին՝ «օնուն պախշիշէնի պէն ու լաճաղըմ» ըսելով՝ կը կտրէր գլուխը և սուրին ծայրն անցուցած՝ կը տանէր Վալիին մօտ, հաստատելով որ այն ինչ յեղափոխականին գլուխն է։ Եօթը տարեկան մի տղայ, որ իւր յղի մօր հետ լեղապատատ կը փախչէր, թաշուր կաղին օյի մօտ կը հանգիպի թուրք զինուորներու։ Մին իր սուրը փորձելու համար տղուն մէջքին կը զարնէ և երկուքի ձեղքուած կը ձգէ գետին։ յուսահատ մայրը իր որդւոյն դիակին վրայ կիյնայ։ Կը պատռեն այդ մօր արգանդը, դեռ լոյս չտեսած երախան կը հանեն և սուրի ծայր անցուցած՝ կը տրնկեն գետին։ Մի ուրիշ կողմ թուրք խուժանը իր գտած անդէն անձերու մէկ մասը Աստղիկ գետակի վրայ շինուած սպանդանոցը կը տանի։ Հոն ոչխարի նման մէկմէկու ետեւէ 30-40 մարդոց գլուխները կը կտրեն և դիակները կը նետեն ջրին մէջ։ Մի մասն ալ մղկիթներու առջև «ղուրպան» կընեն։

Օհնք աւ սիրտ ունեցողներէն շատեր կը կուռին արիաբար և կը մեռնին պատուով կամ կազատին։ շատեր ստորերկրեայ մութ խորշեր կամ ձեղնայարկ անկիւններ կապաստանին, կը պահուին։ շատեր վերեւ յիշուած գետակի մէջ կը նետեն իրենք զիրենք, անողորմ դահիճներուն սուրէն ազատուելու համար։

Վարդի տղաք հրացաններու պայթիւնէն ահ ու դողի մէջ ինկած՝ կը ճչեն, կը ճուռն։ սիրտ չլիմանար այդ անմեղներու աղէկտուր վիճակին։ անոնք մօտակայ տունները կը փախչէին՝ իր թիկնոցը չառած, որն իր դասագրքը, որն իր կօշիկները, որն իր գլխարկը։ բարեսէր տանտիկիները գրկաբաց հիւրընկալեցին ապագայի այդ յոյսերը և կարելին գործեցին զանոնք հանգստացնելու համար։ Ինչ կըլլար թշուառ կիներու և մայրերու սիրտը, երբ կը մտածէին թէ իրենց էրիկներ շուկայի մէջ, իրենց զաւակները դպրոցներու մէջ կը չարհարուէին ու կըսպանուէին։ մէկ աւուր մէջ կը կորսուէին ամէնք, ալ և կը մնային աւյոյս և անպաշտպան։ Մինչ անդին, քիչ հեռուն, խուժանին վայրագ ոռնոցը կը խառնուէր մարթինիի որոտընդոտ ձայնին, հայ տիկինն ու օրիորդ իրար փաթթուած՝ ամէն բոլակ իրենց մահուան կըսպասէին։ անոնցմէ արիասիրտները թաղերու մէջ կը համարմբուէին, գէթ կանացի յուսահատ դիմադրութիւն մ՝ ընելու, երբ իրենց մօտենալ փորձէին։

Մայր եկեղեցւոյ երկու դռներու մօտ յիսուն փաթսուն երիտասարդներ գէն իձեռնին կեցած՝ ներս կառնէին մանուկ ու ծեր, արու և էգ։ այդ եկեղեցւոյ վերնատունը, աւանդատունները, գաւիթները, գուրսի սենեակները, բակերու մէջ, լեցուած էին խուռն բաղմութիւն։ այն որ միջոց ունէր՝ տպաստանեցաւ հոն։ Այնտեղի աեսարանն ալ նոյնպէս աղէկատառ և սրբատաճիկ էր։ կաթնկեր մանուկներ, կարծես բնութենէ զգացած՝ իրենց մօր գիրկ կը ճուռն։ հարսը կուլայ իր փեսան, մայրն՝ իւր զաւակ։ Մի մարդ կիյնայ ներս վիրաւոր կամ առողջ։ կայծակի արագութեամբ ամէնքն ալ կը լսեն, շուրջը կը խոնին, ամէնուն սիրտը տրոփման մէջ՝ կուզէ տեղեկութիւններ քաղել թէ կուրն որ կողմ սաստիկ է, թէ որոնց սպաննուելը տեսած, որոնց արիաբար կուռելը դիտած էր։ կիներ անձկանօք, աչքերնին լի արտասուօք տեղեկութիւն կը փնտռէին։ խեղճ մը կը պատմէր իր անհարկ տան ջանքերը, սրճարա իր պատը ծակելով փախչելը

հրաշքով ազատուելը։ իր բերած լուրերէն՝ ոմանք քիչ մը միտթարուած կը թուին, ուրիշներ վայնասուն մէ կը փրցունեն, իւրաքանչիւրը իւր առած լուրի համեմատ։ Եկեղեցւոյ այդ ամբոխին մէջ մի սրտոտ երիտասարդ բանաստեղծիւն մը կընէ, նշաւակելով հարուստ դասակարգի անտարբերութիւնը դէպ ի ս. գործը. ի մէջ այլոց, հայ ժողովրդի անդէն մնալը հարուստներուն վրայ իրաւամբ ծառայելով՝ կըսէ. «հարուստներ, ոսկեկեր կեղանիներ, թէ դրամ տայիք, այսօր ամէնքս ալ զինուած կը լինէինք։ հիմա կորսնցուցիք ձեր հարստութիւն, բայց մեր կեանքն ալ վերայ տուիք. աղքատ ժողովրդի հազար աշխատութեամբ ձեռք բերած ունեւորները կարող չէ մարթինի դէմ դնել, ևն։

Մի փոքր զինուած խումբ շրջապատած Առաջնորդ սրբազանը տարին Փրանսական հիւպատոսարանը որ շատ մօտ է եկեղեցիին։ սրբազանի ընկերացած էր կաթողիկ Առաջնորդ Հաճեան Սահակ «Գերապայծառ» որ վերջին անգամ եկած էր Առաջնորդարան, համոզել Պետրոս եպիսկոպոսը՝ Վիրինի Հայերուն նկատմամբ վալիի պահանջած հեռագիրը տալու։ սրբազանի վերջին «ոչ»-ը հնչեցուցած պահուն լսուած էր հրացաններու պայթիւնը, երբ ամէն ոք՝ սարսափահար վիճակի մէջ, կը դիմէր եկեղեցիին, դռները պահպանելու և Հայերը ներս առնելու։

Հնչակեան Կուսակցութեան Մարզումի Մասնաճիւղը վերջին երեք տարւայ միջոցին ունեցել է մուտք 3110 օսմանեան ոսկի։ Զանազան ժամանակներ 1893 թ. այդ գումարից ուղարկված է Կուսակցութեան Կենտրոնի գանձարանը 600 օսմ. ոսկի և 1895 թ. 1200 օսմ. ոսկի, որից 37 ոսկի ծախսված է փոխադրութեան համար։ Մուտքի մնացեալ գումարը ծախսված է Մասնաճիւղի տեղական պէտքերի վրայ։

«ԱՊՏԱԿ»

ԵՐԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ՄԻԱՄՈՆԵԱՅ)

Լոյս տեսաւ «Ապտակ» երկրորդ տարւայ ապրիլի համարը, թ. 12։ Նկարը — Մուլթանը իր թիւն վրայ կը խաղցնէ Եւրոպան։ յեղափոխութիւնը կը խանգարէ անոնց հաւասարակշռութիւնը։

«Ապտակ»ի այդ համարի բովանդակութիւնն է. —

Տրամախօսութիւն (նկարի քաջատրութիւն). — Ձկներու ժողովը. — Մուլթանի կարծատեսութիւնը. — Նոր աշխարհագրութիւն, սրբազան և քարեփոխակ. — Փրանսական հաճախատարութիւն. — Թուրք ուսանողներուն աչքը լոյս. — Նմիշ օսմ. օրէնքներէն. — «Ուռուցիկ թերթ». — Մեծ փոխադրութիւն Արմենիա. — Բանտերու մէջ — Թուրքերու զայրոյթը Զէյթունի դէմ. — «Ապտակ»ի հանելուկներ։ Բեպուս. — «Ապտակ»ի Ազդ. — Արեւածագին։

Ե.Օ.Գ.

«ԱՊՏԱԿ»ի ապրիլ ամսվայ 12-դ համարով աւարտում է նրա հրատարակման երկրորդ տարեշրջանը։ Այն քաջանորոգեցը, որոնց ցանկանում են նորոգել իրանց բաժանորդավճարն «ԱՊՏԱԿ»ի երրորդ տարեշրջանի համար, հրաւիրվում են անյապաղ անել այդ։

Յօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀՆԶՈԿ»-Ի

ԼՕՆԴՕՆ